



## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Մամլո հաղորդագրություն

12 ապրիլի, 2011, Երևան

### *Հայաստանը ցանցային պատրաստվածությամբ աշխարհում 109-րդն է*

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույց 2010/11»-ի հիմնական արդյունքները: Վերջինս հրապարակվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից:

Այս զեկույցի հիմքում ընկած է ցանցային պատրաստվածության համաթիվը, որը ցույց է տալիս երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, որն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը:

Զեկույցը հրապարակվում է արդեն 10 տարի շարունակ: Այս տարի այն գնահատել է աշխարհում 138 տնտեսությունների ՏՏ մրցունակությունը:

ՀՏՖ-ի գնահատականներով ցանցային պատրաստվածության տեսանկյունից լավագույն արդյունքներն են գրանցել Շվեդիան, Սինգապուրը և Ֆինլանդիան: Առաջին երկուսը պահպանել են նախորդ տարվա իրենց դիրքերը, մինչդեռ Ֆինլանդիան առաջադիմել է 3 հորիզոնականով: Նախորդ տարի 3-րդ տեղում գտնվող Ղանիան թուլացրել է իր դիրքը և նահանջել 7-րդ հորիզոնական: Ինչպես և նախորդ տարի, լավագույն հնգյակում են ամրապնդվել Շվեյցարիան և ԱՄՆ-ն (համապատասխանաբար 4-րդ և 5-րդ դիրք):

Հայաստանը ցանցային պատրաստվածության ցուցանիշով աշխարհում 109-րդն է և նախորդ տարվա համեմատությամբ զիջել է իր դիրքերը 8 տեղով, չնայած բացարձակ արժեքով գնահատականը աճել է 0.04 միավորով: Հարկ է նաև նշել, որ այս տարի զեկույցում ընդգրկված երկրների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է հինգով:

Ընդհանուր առմամբ, նահանջ է արձանագրվել ցուցանիշի բոլոր 3 բաղադրիչներում, որոնցից յուրաքանչյուրում Հայաստանի դիրքերը անկում են ապրել 6 տեղով:

Հայաստանի, ԱՊՀ երկրների և Վրաստանի ցանցային պատրաստվածության համաթվի և բաղադրիչների ենթահամաթվերի փոփոխությունները ներկայացված են ստորև:

Երկիր	Ցանցային պատրաստվածություն		Միջավայրի բաղադրիչ		Պատրաստվածության բաղադրիչ		Օգտագործման բաղադրիչ	
	2010/11 վարկանիշ	Փոփոխություն	2010/11 վարկանիշ	Փոփոխություն	2010/11 վարկանիշ	Փոփոխություն	2010/11 վարկանիշ	Փոփոխություն
Ղազախստան	67	+1	87	-7	56	+18	56	-2
Ադրբեջան	70	-6	77	-14	49	+8	74	-6
Ռուսաստան	77	+3	83	+3	68	+5	69	+2
Ուկրաինա	90	-8	98	-13	82	-6	86	-7
Վրաստան	98	-5	86	-3	107	-2	92	-2
<b>Հայաստան</b>	<b>109</b>	<b>-8</b>	<b>114</b>	<b>-6</b>	<b>97</b>	<b>-6</b>	<b>111</b>	<b>-6</b>
Տաջիկստան	112	-3	123	-8	88	+31	112	-13
Ղրղզստան	116	+7	112	-6	125	+4	106	+2

Ցանցային պատրաստվածության ցուցանիշով Հայաստանը շարունակում է անբարենպաստ դիրք զբաղեցնել անգամ ԱՊՀ երկրների շրջանում: Նշված համադրելի երկրների շարքում ընդհանուր ցուցանիշի դրական տեղաշարժ է արձանագրվել Ղազախստանում, Ռուսաստանում և մասնավորապես Ղրղզստանում, մինչդեռ մյուս երկրների դիրքերը վատթարացել են համաշխարհային SS վարկանիշայում ցանկում: Ամենամեծ անկումը գրանցվել է Ուկրաինայում՝ 8 տեղով (նույնքան, ինչքան որ Հայաստանում): Հարևան Վրաստանն ու Ադրբեջանը, չնայած նույնպես զիջել են իրենց դիրքերը, այնուամենայնիվ, շարունակում են Հայաստանից առաջ գտնվել համապատասխանաբար 11 և 39 հորիզոնականով:

ՀՏՖ-ի գնահատականներով Հայաստանի ՏՀՏ ոլորտում առավել ուշագրավ առավելություններն ու թերություններն են.

Ամենաբացասական առավելությունները	Տեղ	Ամենաբացասական թերությունները	Տեղ
Չափահաս բնակչության գրագիտության մակարդակ, %	10	Կառավարության կողմից զարգացած տեխնոլոգիաների ձեռքբերում	133
Պայմանագրային պարտավորությունների հարկադրման օրերի քանակ	11	Վեճուրային կապիտալի առկայությունը	130
Բնակչության հեռախոսակապի ամսական բաժանորդագրման վճար	32	Կառավարման դպրոցների որակը	129
Բջջային հեռախոսակապի սակագներ	37	Պայմանագրային պարտավորությունների հարկադրման գործընթացների թիվը	128
Պատենտների գրանցման ազգային կենտրոնին դիմումների քանակ՝ 100 շնչի հաշվով	43	ԶԼՄ-ների ազատություն	126
Ֆիքսված հեռախոսակապի սակագներ	45	Ընկերության ծախսեր ՀուՄ նպատակներով	126
Բիզնեսի համար հեռախոսակապի միացման ծախսեր	49	Նորագույն տեխնոլոգիաների առկայություն	126
Բնակչության հեռախոսակապի միացման վճար	54	ԲՈՒՀ-արդյունաբերություն համագործակցություն ՀուՄ շրջանակներում	123
Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրին դիմումներ՝ 1 մլն շնչի հաշվով	55	Ինտերնետի միջազգային կապուղիների թողունակություն՝ Մբ/վ 10,000 շնչի հաշվով	123
		Հետազոտական և ուսուցողական ծառայությունների առկայություն	123
		Քլաստերների զարգացման մակարդակը	123
		ՏՀՏ ազդեցությունը նոր ապրանքների և ծառայությունների ստեղծման վրա	121

## **«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

«Տնտեսություն և արժեքներ»-ը մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական թևն է: «Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

*Երևան 0051, Դովսեփ Էմին 123*  
*Ֆեռ. +37410 219740*  
*Էլ-փոստ. [info@ev.am](mailto:info@ev.am)*  
*[www.ev.am](http://www.ev.am)*